ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոգեբանի, լոգոպեդի, հատուկ մանկավարժի թափուր տեղերի մրցույթների

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ.103 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի *հոգեբանի (1 դրույք), լոգոպեդի (1 դրույք), հատուկ մանկավարժի (1 դրույք)* թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև1).
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
3) անձը հաստատող փաստաթուղթ.
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
5) ինքնակենսագրություն (Ձև4).
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8) ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում).
10) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. մարտի 11-ից մինչև ապրիլի 05–ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. ապրիլի 10-ին՝ ժամը 14:00-ին «Երևանի հ.103 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում: Հասցեն՝ ք.Երևան, Նոր-Նորքի 2-րդ զ., Թոթովենցի 3 հասցեում:

Տեղեկությունների համար զանգահարել 010-62 12 61 հեռախոսահամարով: